ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 124
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Այգեզարդ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Արտաշատ համայնքի (Այգեզարդ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Այգեզարդ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Այգեզարդ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-009-0178-0004 կադաստրային ծածկագրով 0.00063 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք և 03-009-1928-0001 կադաստրային ծածկագրով 0.00146 հա մակերեսով բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողեր	03-009-0178-0004 կադաստրային ծածկագրով 0.00063 հա մակերեսով և 03-009-1928-0001 կադաստրային ծածկագրով 0.00146 հա մակերեսով ջրային նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Այգեզարդ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Այգեզարդ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 26» «ապրիլի» 2024 թ.